է նաև իբրև զրույց, քանզի նկարագրվող իրադարձություններից որոշ ժամանակ է անցել, և դեպքերը շարունակաբար պատմվելով՝ հարստացել կամ հարստանում են գրական օրինաչափություններով ու մանրամասնություններով:

Թեմատիկ առումով՝ Դավրիժեցու պատմագրքում առկա զրույցները, ինչպես բուն հայկական զրույցներն ընդհանրապես, նույնպես բաժանվում են երկու խմբի՝ կրոնական և աշխարհիկ: Համեմատաբար շատ են աշխարհիկ զրույցները, ինչը պայմանավորված է ժանրի զարգացման ուշմիջնադարյան օրինաչափություններով: Կրոնական բովանդակությամբ զրույցները առավելապես դրսևորվում են Դավրիժեցու պատմագրքի այն գլուխներում, որոնք վկայագրում են հայոց կաթողիկոսների ու տարբեր հոգևորականների վարքը, ըստ էության, ծառայելով իբրև հավելյալ փաստարկ տվյալ հոգևորականի սրբակենցաղության ու մաքրակրոնության:

Պատմության ընդհանուր հյուսվածքին ներդաշնակման սկզբունքների առումով նախ պետք է առանձնացնել, այսպես կոչված՝ ցրված զրույցները: Դավրիժեցու ձգտումը՝ տեղի ունեցած իրադարձությունները ներկայացնել հնարավորինս համակարգված, պատճառահետևանքային լայն կապերով, հանգեցրել է այն բանին, որ որոշ զրույցներ նրա պատմագրքում ներկայանում են որոշակի ցրվածությամբ, այսինքն՝ նույն զրույցի մաս կազմող տեքստերը ընդմիջարկվում են այլ տեքստերով: Բուն և այլ տեքստերը, ճիշտ է, որոշակի բովանդակային կապ, այնուամենայնիվ, ունեն: Այդպիսի մի առանձին զրույց կարելի է դիտարկել «Յաղագս առաջին գալոյ Ջղալօղլւոյն, յորոյ պատճառէ քշեաց շահն բոլորովին բովանդակ զերկիրն Արարատու և զնորին մերձակայ սահմանակից երկիրսն ընդ նմին» վերնագրով Դ գլխում սկզբնավորվող և հետագա այլ գլուխներում տարաբնույթ ու տարակերպ վկայագրումներով շարունակվող ջուղահայերի գաղթի մասնավոր մի դրվագը՝ գետն անցնելու սրտառուչ պատմությունը, որը գրված